*«Հավելված N 3*
*ՀՀ վարչապետի 2018 թ.*
*սեպտեմբերի 19-ի N 1230-Ն*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 508-Ա 12.06.2025թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Նախարար **Անահիտ Ավանեսյան**
4. Գործուղման վայրը — Ֆրանսիայի Հանրապետություն ք.Փարիզ
5. Գործուղման ժամկետները — 2025թ.հունիսի 16-17-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — Գիշերավարձ, ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը — Օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Անահիտ Ավանեսյան* | *Անուն, ազգանուն 2* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | 0.0 | | 0 |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | | 0.0 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | | 0.0 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | 0.0 |
| | Օրերի քանակը | 0 | | |
| | Ընդամենը (դրամ) | 0.00 | | 0.0 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | EUR 109.00 | | 0 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 48,470.12 | | 0.0 |
| | Օրերի քանակը | 2 | | |
| | Ընդամենը (դրամ) | 96940.24 | | 96.9 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 96940.24 | | 96.9 |

Կուրսը՝ 13.06.2025թ-ի դրությամբ՝ 1EUR- 444.68 ՀՀ դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը — (ստորագրություն) 13.06.2025

Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230 - Ն որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անահիտ Ավանեսյան, Առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2025 թվականի հունիսի 16-17-ը, Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ

3. **Հրավիրող կողմը**

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպական տարածաշրջանային գրասենյակ, Ֆրանսիայի առողջապահության նախարարություն

4. **Գործուղման նպատակը**

Մասնակցություն ԱՀԿ-ի և Ֆրանսիայի առողջապահության նախարարության համատեղ կազմակերպած բարձր մակարդակի համաժողովին՝ «Հոգեկան առողջությունը բոլոր քաղաքական ուղղություններում. մարտահրավերների գնահատում և համատեղ լուծումների ձևավորում» խորագրով, որը նպատակ ունի՝

- բարձրացնել քաղաքական ուշադրությունը հոգեկան առողջության խնդիրների նկատմամբ,
- քննարկել ոլորտային բարելավումների հնարավորությունները տարբեր երկրների միջև,

ամրապնդել միջոլորտային համագործակցությունը և ներկայացնել Հայաստանի հոգեկան առողջության ոլորտի բարեփոխումներն ու առաջընթացը:

5. **Քննարկված թեմաները**

Համաժողովի ընթացքում ընդգծվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- Հոգեկան առողջության համապարփակ ընդգրկումը պետական քաղաքականության բոլոր մակարդակներում,

- Միջոլորտային մոտեցումների կարևորությունը քաղաքականության մշակման գործընթացում,
- Միջազգային լավագույն փորձի և մոդելների ներկայացում հոգեկան առողջության կառավարման և կանխարգելման գործում,
- ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներդրման ազդեցությունն ու գնահատումը,

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

- Նախարար Անահիտ Ավանեսյանը մասնակցել է նախարարական պանելային քննարկմանը և ներկայացրել է Հայաստանի մոտեցումը հոգեկան առողջության ոլորտում՝ մասնավորապես շեշտադրելով հանրային առողջության, հոգեբանական աջակցության հասանելիության և համայնքային հոգեկան առողջության մոդելների զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:
- Պաշտոնական և ոչ ֆորմալ հանդիպումներ են տեղի ունեցել Ֆրանսիայի, Մալթայի, Լիտվայի և ԱՀԿ բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ հոգեկան առողջության ոլորտում երկկողմ ծրագրերի ընդլայնման, փորձի փոխանակման շուրջ:
- Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ներդրումային հնարավորությունները՝ հատկապես հոգեկան առողջության ենթակառուցվածքների, ծառայությունների և մատակարարման ոլորտներում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

- Ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ հոգեկան առողջության ոլորտում գործընկեր երկրների հետ տեխնիկական համագործակցություն զարգացնելու ուղղությամբ:
- ԱՀԿ-ի և ՀՀ առողջապահության նախարարության միջև նախանշվել է առաջիկա ամիսներին գործընկերային նոր նախաձեռնությունների մեկնարկ՝ կենտրոնանալով քաղաքականության մշակման և գնահատման վրա:

8. **Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

- Ստեղծել մասնագիտական աշխատանքային խումբ՝ հոգեկան առողջության ոլորտում Եվրոպական փորձի ներառման և ծրագրային համագործակցության զարգացման նպատակով:

- Նախաձեռնել համագործակցության հուշագրերի մշակման գործընթացներ ԱՀԿ և մի շարք եվրոպական երկրների առողջապահական կառույցների հետ:
- Եվրոպական ֆինանսական և տեխնիկական աջակցության ներգրավում՝ հոգեկան առողջության բարեփոխումների համար,
- Հայաստանի ներկայացվածության ամրապնդում առողջապահության գլոբալ քաղաքական հարթակներում:

9. **Գործուղման ֆինանսավորում**

Գործուղման ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

Ստորագրությունը, ամսաթիվը

2025 թ. հունիսի 20